Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
դեկտեմբերի 3-ի N 1471 - Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ույ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
1	2	3	4	5	6
1.	«Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում	գլխավոր հատակագծերի մշակման և համաձայնեցման գործառույթներն օպտիմալացնելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծման մասին հաստատված իրավական ակտ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2009 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 155 որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման համար ելակետային նյութերի անվճար հիմունքներով տրամադրումը սահմանող՝ հաստատված իրավական ակտ	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2010 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.	«Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավա-	համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նվազագույն պարտադիր պահանջները սահմանող՝ հաստատված	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2010 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

1	2	3	4	5	6
	ության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	իրավական ակտ			
4.	«Քաղաքաշինության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենսդրական փաթեթի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հայեցակարգով ամրագրված սկզբունքային մոտեցումները սահմանող և առկա օրենսդրական հակասությունները բացառող օրենսդրական փաթեթ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե Երևանի քաղաքապետարան	2010 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
5.	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 609-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հայեցակարգով ամրագրված սկզբունքներին համապատասխան՝ համայնքների գլխավոր հատակագծերի մշակման և հաստատման կարգը սահմանող՝ հաստատված իրավական ակտ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան	2010 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
6.	«Համայնքների հողերի գոտևորման ու օգտագործման սխեմաների մշակման և հաստատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հայեցակարգով ամրագրված սկզբունքներին համապատասխան՝ համայնքների հողերի գոտևորման ու օգտագործման սխեմաների մշակման և հաստատման կարգը սահմանող՝ հաստատված իրավական ակտ	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2010 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

1	2	3	4	5	6
7.	«Համախմբված տարածական պլանավորման փաստաթղթի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	տարածական պլանավորման ռեգիոնալ (միկրոռեգիոնալ) և տեղական մակարդակները համադրող փաստաթղթերի մշակման կարգը սահմանող՝ հաստատված իրավական ակտ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2010 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
8.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի «Տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 997-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	տարածական պլանավորման ռեգիոնալ (միկրոռեգիոնալ) և տեղական մակարդակները համադրող փաստաթղթերի մշակման կարգը հայեցակարգով ամրագրված սկզբունքներից բխող՝ տարածքային հատակագծման նախագծերի մշակման և հաստատման կարգը սահմանող՝ հաստատված իրավական ակտ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2010 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
9.	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններից բխող իրավական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը	օրենքից բխող և հայեցակարգի դրույթները ներառող՝ հաստատված իրավական ակտեր	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2010 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
10.	Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման խնդիրների շուրջ սեմինար-խորհրդակցությունների և թրեյնինգների կազմակերպում	ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն ՀՀ մարզերի քաղաքաշինական ծառայություններին և համայնքներին ցուցաբերված մեթոդական աջակցություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2010 թ. ընթացքում	ՀՀ քաղաքաշինության նախարարությանը հատկացված պահպանության ծախսերի հաշվին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ